# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Փետրվարի 19-ին Լոռու մարզ աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ նախագահ փիար Սերժ Սարգսյանն այցելեց Գուգարաց թեմի Առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցի: Սրբոց Վարդանանց նվիրված Սուրբ և Անմահ Պատարագի ավարտին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի բարիգալստյան խոսքից հետո նախագահը մոմ վառեց եկեղեցում և առանձնացավ աղոթելու: Ապա նախագահի շքախումբը, թեմակալ առաջնորդի ուղեկցությամբ, մասնակցեց եկեղեցու դահլիճում տեղի ունեցող Վարդանանց տոնակատարությանը: Միջոցառմանը Վարդանանց նվիրված շարականների, խմբերգերի և մեներգերի կատարմամբ ներկաներին հիացմունք պատճառեց Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու Դպրաց դասը՝ տիկին Ռուզաննա Մխիթարյանի ղեկավարությամբ:

Հաջորդիվ ՀՀ նախագահը, թեմի առաջնորդը, մարզային և քաղաքային իշխանության ներկայացուցիչները մասնակցեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի անունը կրող Վանաձորի թիվ 1 դպրոցի բակում տեղադրված Վեհափառ Հայրապետի կիսանդրիի բացման արարողությանը, որի ընթացքում ելույթներով հանդես եկան Սրբազան Հայրը, դպրոցի տնօրենությունը և աշակերտները:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*